ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 11.04.2016Թ. ԹԻՎ 10/4-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Էմին Բեգլարյանի, Մանե Կարապետյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի, Կարեն Մեժլումյանի և Մարինե Ֆարմանյանի,

քննության առնելով Պալատի խորհրդի 11.04.2016թ. թիվ 10/4-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնի կանոնակարգում» փոփոխություններ կատարելու հարցը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 15-րդ կետի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 6-րդ մասի և 37-րդ հոդվածի պահանջներով՝ Պալատի խորհուրդը, միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 11.04.2016թ. թիվ 10/4-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնի կանոնակարգում (**այսուհետ՝ Կանոնակարգ**) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Կանոնակարգի 5-րդ կետում՝ «երկու տարի» բառերը փոխարինել «անորոշ» բառերով.

2) Կանոնակարգի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

23 մարտի 2021թ.
թիվ 5/16-Լ

«9. *Գիտավերլուծական կենտրոնի կարծիքը կարող է ուղարկվել խորհրդի անդամներին էլեկտրոնային փոստով, եթե Պալատի աշխատակազմը գտնում է, որ կարծիքը վերանայման կամ քննարկման կարիք ունի: Գիտավերլուծական կենտրոնի կարծիքը խորհրդի անդամներին ուղարկելու դեպքում, եթե եռօրյա ժամկետում խորհրդի անդամների կողմից առաջարկ չի ներկայացվում հարցը խորհրդի օրակարգում քննարկելու վերաբերյալ, ապա կարծիքը Պալատի աշխատակազմը կարող է ուղարկել հասցեատիրոջը: Խորհրդի առնվազն մեկ անդամի կողմից հարցը խորհրդի նիստում քննարկելու առաջարկի դեպքում, կարծիքը ներկայացվում է խորհրդի քննարկմանը: Կարծիքի նախագիծը հաստատվում կամ փոփոխվում է խորհրդի կողմից:*»:

3) Կանոնակարգի 11-րդ կետում «վաղաժամկետ» բառը փոխարինել «ցանկացած ժամանակ» բառերով:

4) Կանոնակարգի 16-րդ և 17-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած:

2. Սահմանել, որ Գիտավերլուծական կենտրոնի համակարգողի լիազորությունները անորոշ ժամկետով շարունակում է իրականացնել փաստաբան, ի.գ.թ. Լյուդվիկ Դավթյանը:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

23 մարտի 2021թ.
թիվ 5/16-Լ
ք. Երևան